



ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Հ Ր Ա Մ Ա Ն

« 05 » « փետրվարի » 2024 թ. № 38-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման N 1 հավելվածով, Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ '

- Հաստատել շրջակա միջավայրի նախարարության 2024 թվականի աշխատանքային ծրագրի և կատարողականի գնահատման ակտը՝ համաձայն հավելվածի:
- Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար Ս.Աթանեսյանի վրա:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

2/5/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

« 05 » փետրվարի 2024թ.
ք. Երևան

Շրջակա միջավայրի նախարարության աշխատանքային ծրագրի և կատարողականի գնահատման ակտ

2024թ.

No	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի տեսակը	Աշխատանքի նպատակը	Աշխատանքի գնահատման չափանիշը	Աշխատանքի արդյունքի ձևը	ԿՇԻՐ	
						I կիսամ.	II կիսամ.
1	2	3	4	5	6	7	8
1	Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի մշակում և կառավարության որոշման ընդունում	Նպատակային	Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և որակի բարձրացման նպատակով կառավարման գերարդյունավետ համակարգերի ներդրումը, ջրային ռեսուրսների պահպանման, այդ թվում՝ ջրահեռացման ու կեղտաջրերի մաքրման գործընթացի կանոնակարգումը, Արարատյան արտեզյան ավազանի և գետային էկոհամակարգերի պահպանությունն ու կառավարումը.	Հյուսիսային ջրավազանում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցում, ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռում, որն իր հերթին կբերի ջրային ռեսուրսի արդյունավետ և ողջամիտ կառավարման, ինչպես նաև ջրային ռեսուրսի խնայողությանը	Հյուսիսային ջրավազանում ջրի ազգային ու ռազմավարական պաշարների հստակեցում, ջրի առաջարկի և պահանջարկի հավասարակշռում, որն իր հերթին կբերի ջրային ռեսուրսի արդյունավետ և ողջամիտ կառավարման, ինչպես նաև ջրային ռեսուրսի խնայողությանը	0.5	0.5
2	Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների իրականացում	Նպատակային	Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների պահպանություն, հյուծման կանխարգելում և ստորերկրյա ջրային ռեսուրսների խնայողություն	Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի գույքագրման արդյունքների հիմա վրա լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների իրականացման ժամանակացույցի սահմանում՝ ըստ առաջնահերթությունների: Ըստ ժամանակացույցի՝ 1-ին փուլով առաջնահերթ գնահատված Արարատի և Արմավիրի մարզերում խորքային հորերի լուծարման կամ կոնսերվացման աշխատանքների իրականացում	Լուծարված կամ կոնսերվացված խորքային հորեր	0.5	0.5
3	Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառամաքրման աշխատանքների իրականացում:	Նպատակային	Ջրի որակի վատթարացման և լճի ճահճացման կանխարգելում: Ջրի որակի վատթարացման և լճի ճահճացման կանխարգելում: Յուրաքանչյուր տարի՝ Սևանա լճի շրջակայքում տարեկան 244 հա ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների իրականացում	Ջրի որակի բարձրացում:	Սևանա լճի շրջակայքի 244 հա ջրածածկ տարածքների մաքրման աշխատանքների իրականացման արդյունքում՝ մաքրված Սևանա լիճ:	0.5	0.5

4	"Սևան" ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային լողափերի գործարկում	Նպատակային	«Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում կառավարության համապատասխան որոշումներով հաստատված և դեռևս չգործող հանրային լողափերը՝ կահավորման և սպասրկման ծառայությունների մատուցման նպատակով՝ համապատասխան մրցույթային կարգով, պատվիրակել երրորդ անձանց:	Գեղեցիկ կահավորված, հարդարված և գրավիչ ծառայություններ մատուցող հանրային լողափեր, հանրության բոլոր շերտերին հասանելի հանգստի հնարավորություն Սևանա լճի ափին, անվճար ծառայություններ՝ մուտք լողափ, հանդերձարաններ, հանրային սանհանգույցներ, շվաքարաններ, բուժկետ, փրկարարական ծառայություն, երեխաների համար խաղահրապարակներ, արքահանության պատշաճ կազմակերպում և մաքրման կայանների առկայություն, հեռանկարային ներդրումային ծրագրեր և հավելյալ աշխատատեղերի ստեղծում:	Բարեկարգված, կահավորված և սպասարկվող հանրային լողափերի առկայություն՝ հանրության բոլոր շերտերին հասանելի հանգստի հնարավորություն.	0.5	0.5
5	Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների կազմակերպում, այդ թվում՝ անտառային տնկարանների հիմնում և սերմնային տնտեսության զարգացում	Նպատակային	Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը	<< կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի պահանջի ապահովում	Անտառածածկ տարածքների ընդլայնում, անտառապատման ու անտառավերականգնման աշխատանքների իրականացման համար որակյալ տնկանյութի ստացում: 2024թ.՝ անտառաշակույթների հիմնում՝ 1000 հա 2025թ.՝ անտառաշակույթների հիմնում՝ 1975հա 2026թ.՝ - անտառաշակույթների հիմնում՝ 2950հա -ջերմոցային տնտեսություններում փակ արմատային համակարգով տնկանյութի աճեցում՝ շուրջ 1 մլն. հատ	0.5	0.5
6	Անտառների կառավարման ոլորտում անտառապահպանության, անտառվերականգնման և անտառօգտագործման նորագույն տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում	Նպատակային	Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը	<< կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի պահանջի ապահովում	Ապօրինի անտառօգտագործման նվազում, կանխարգելում, անտառվերականգնման. անտառապատման, ինչպես նաև անտառտնտեսվարման աշխատանքների արդյունավետության բարձրացում, միջազգային ստանդարտներին համապատասխան ջերմոցային համալիրների և սառնարանային տնտեսության հիմնում: Ըստ միջազգային դրամաշնորհային ծրագրով հաստատված ժամանակացույցի՝անտառային ոլորտի նորագույն տեխնիկայի ձեռքբերում, այդ թվում «Պիկապ» տեսակի ամենազնային /14 հատ/, դրոններ /14 հատ/, GPS	0.5	0.5

7	<p>Վնասատուներից և հիվանդություններից անտառների պաշտպանության նպատակով անտառապաշտպանական ուսումնասիրությունների իրականացում, վնասատուների և հիվանդությունների դեմ կենսաբանական պայքարի իրականացման կազմակերպում</p>	Նպատակային	<p>Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը</p>	<p>«ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի պահանջի ապահովում</p>	<p>Առողջ անտառների առկայություն Անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարը քիմիական եղանակից կենսաբանականի անցնելու համար նախադրյալների ստեղծում: - յուրաքանչյուր տարի նախատեսվում է վնասատուների դեմ ավիացիոն կենսաբանական պայքարի աշխատանքներ 9000 հա անտառածածկ տարածքներում:</p>	0.5	0.5
8	<p>Անտառային կադատորի վարում</p>	Նպատակային	<p>Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը</p>	<p>«ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի պահանջի ապահովում</p>	<p>Անտառների կադատորի վարման համար անհրաժեշտ հենքի ստեղծում, յուրաքանչյուր տարի անտառային կադատորի վարում</p>	0.5	0.5
9	<p>Պետական անտառների, անտառային հողերի օգտագործման տալու և բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրելու ընթացակարգերի վերանայում</p>	Նպատակային	<p>Անտառների կայուն կառավարումը՝ անտառների պահպանությունը, պաշտպանությունը, օգտագործումը և անտառածածկ տարածքների ընդլայնումը՝ անտառապատման ու անտառավերականգնման միջոցով, ու դրանց իրականացմանն ուղղված կարողությունների շարունակական հզորացումը</p>	<p>«ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշման N 1 հավելվածի պահանջի ապահովում</p>	<p>«Անտառները և անտառային հողերը օգտագործման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների (բնապահպանական հողերի) հողամասերը վարձակալության կամ կառուցապատման իրավունքով տրամադրման կարգը սահմանելու, ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N806-Ն և ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N1578-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության որոշման ընդունում</p>	0.5	0.5

10	<p>«ՀՀ տարածքում հանդիպող արդյունազործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների տեսակային կազմի, տարածվածության, քարտեզագրման և պաշարների գնահատման աշխատանքների իրականացում»</p>	Նպատակային	<p>1.Արդյունազործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվության անկայություն, 2.արդյունքների վերլուծություն, օգտագործման ենթակա չափաքանակների հիմնավորումների պատրաստում, 3. տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում, կադաստրի ձևավորում/ կատարելագործում, վարման ապահովում:</p>	<p>Արդյունազործական և սիրողական որսի օբյեկտ հանդիսացող կենդանիների վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվության անկայություն, չափաքանակների հիմնավորումների պատրաստում</p>	Տեղեկատվական բազա, տվյալներ, գրություններ, առաջարկություններ, հաշվետվություն	0.5	0.5
11	<p>Լայն կիրառում ունեցող բույսերի /դեղաբույսեր, ուտելի բույսեր/ ուսումնասիրությունների իրականացում հանրապետության տարածքում</p>	Նպատակային	<p>1.Բուսական աշխարհի վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվության անկայություն, 2.արդյունքների վերլուծություն, օգտագործման ենթակա չափաքանակների հիմնավորումների պատրաստում, 3.տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ստեղծում, կադաստրի ձևավորում/ կատարելագործում, վարման ապահովում:</p>	<p>Բուսական աշխարհի վիճակի վերաբերյալ արդիականացված, հավաստի և համակարգված տեղեկատվության անկայություն, չափաքանակների հիմնավորումների պատրաստում</p>	Տեղեկատվական բազա, տվյալներ, գրություններ, առաջարկություններ, հաշվետվություն	0.5	0.5
12	<p>«Շենքերի էներգարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների դիսկերի նվազեցում» դրամաշնորհային ծրագրի «Շենքերի ոլորտում չափողականություն, հաշվետվողականություն և հավաստագրում (ՉՀՀ) համակարգի ստեղծում և գիտելիքի կառավարում»</p>	Նպատակային	<p>Ծրագիրը միտված է սիստեմատիկաբար նվազեցնել ջերմոցային գազերի /ՋԳ/ արտանետումները Հայաստանում գոյություն ունեցող շենքերի ֆոնդից և այդ միջոցով ապահովել կայուն զարգացման օգուտները: Ծրագիրը կհանգեցնի էներգիայի էական խնայողության և դրա արդյունքում՝ ՋԳ արտանետումների կրճատման, կանաչ աշխատատեղերի ստեղծման և աղքատության կրճատման: Ծրագիրը կաջակցի շենքերի ոլորտում չափողականության, հաշվետվողականության և հավաստագրման (ՉՀՀ) շրջանակի, այդ թվում՝ էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգերի ստեղծմանը և տեղայնացմանը՝ ՄԱՉ-ի փորձի հիման վրա:</p>	<p>1. Էներգետիկ կառավարման տեղեկատվական համակարգի (ԷԿՏՀ) համակարգչային ծրագրի տեղայնացման աշխատանքների ավարտում և ամփոփում: 2.Շենքերի ոլորտում արտանետումների գործակիցների և հաշվարկման մեթոդաբանությունների մշակում. 3. ԷԿՏՀ տվյալների ավտոմատ ստացման համար սարքավորումների, «խելացի հաշվիչների» և կապի միջոցների ձեռքբերում: 4. Երևան համայնքի հասարակական շենքերի ստատիկ և դինամիկ տվյալների հավաքագրում ու վերլուծում: 5, Mershenq.am վեբ-կայքի արդիականացում, տվյալների թարմացում: 6, Էներգետիկ ատոլիտի վերաբերյալ դասընթացների թեմաների մշակում և դասընթացների կազմակերպում: 7, Գովազդային նյութերի պատրաստում և տարածում: 8, Ծրագրի շրջանակներում ջերմարդիականացված շենքերի էներգետիկ ատոլիտների իրականացում և էներգետիկ անձնագրերի կազմում: 9, Ծրագրի շրջանակներում ջերմարդիականացված</p>	<p>1, էներգիայի կառավարման տեղեկատվական համակարգի (ԷԿՏՀ) համակարգչային ծրագիր, 2, Mershenq.am արդիականացված վեբ-կայք, 3, Շենքերի էներգետիկ բնութագրերի (ՇԷԲ) գնահատման մեթոդաբանություն հիմնված ԽՍՕ 52000 լրակազմի ստանդարտների հիման վրա, 4, էներգետիկ ատոլիտի վերաբերյալ դասընթացներ, 5, Գովազդային նյութեր, 6, Ծրագրի շրջանակներում ջերմարդիականացված շենքերի էներգետիկ ատոլիտ և էներգետիկ անձնագրեր, 7, Ծրագրի շրջանակներում ջերմարդիականացված շենքերից ջերմոցային գազերի արտանետումների հաշվարկ և գնահատում:</p>	0.5	0.5
13	<p>«Անցում էլեկտրական շարժիչով մեքենաների Հայաստանում» ծրագրի իրականացում</p>	Նպատակային	<p>Նպատակ է տրամադրվում ոլորտում ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված ՀՀ ազգային նպատակների և Փարիզյան համաձայնագրի շրջանակներում ստանձնած պարտավորությունների իրագործմանը՝ խթանելով անցումը էլեկտրական շարժումակությանը:</p>	<p>1. Էլեկտրական շարժումակության անսլոգ գնումների ուղեցույցի մշակում, 2. Էլեկտրական շարժումակության զարգացման քաղաքականության և իրավակարգավորումների փաթեթների մշակում, 3. Էլեկտրական շարժումակության ազգային ֆորումի անցկացում:</p>	<p>1. Էլեկտրական շարժումակության անսլոգ գնումների ուղեցույց, պետական գնումների ոլորտի թվով 40 վերապատրաստված մասնագետներ, 2.Էլեկտրական շարժումակության զարգացման քաղաքականության և իրավակարգավորումների փաթեթներ, 3. Էլեկտրական շարժումակությանը նվիրված ազգային ֆորում</p>	0.5	0.5
14	<p>«Հայաստանի անտառների կայունություն, հարմարվողականության բարձրացում և համայնքային զարգացման կանաչ աճի խթանում» կլիմայի փոփոխության մեղմման միջոցով՝ ծրագրի՝ «Կլիմայի փոփոխության հետևանքների մեղմում և հարմարվողականություն՝ նոր տեխնոլոգիաների փոխանցման միջոցով» բաղադրիչի իրականացում</p>	Նպատակային	<p>Կլիմայի փոփոխության մեղմում՝ անտառային ներդրումների և տեխնոլոգիաների փոխանցման միջոցով, կենտրոնական և համայնքային մակարդակով անտառային ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում:</p>	<p>1. 700հա անտառտնկման և տնկարքերի խնամքի աշխատանքների իրականացում, 2. Շահագրգիռ կողմերի համար դասընթացի կազմակերպում:</p>	<p>1. 700հա տարածքի վրա իրականացված անտառտնկման և տնկարքերի խնամքի աշխատանքներ, 2. Շահագրգիռ կողմերի համար 2 դասընթացի կազմակերպում:</p>	0.5	0.5

15	«Հայաստանի Հանրապետության արիդ (Վայոց ձորի մարզ) գոտում կլիմայի փոփոխության ընթացքի մեղմում և հարմարվողականության կարողությունների հզորացում» ծրագրի իրականացում	Նպատակային	Ծրագրի հայեցակարգի մշակում և ներկայացում՝ ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կանաչ կլիմայի հիմնադրամին: Ծրագրի մեկնարկից հետո՝ ըստ ժամանակացույցի՝ 1. Հողի օրգանական ածխածնի կուտակման հատկությունների մեծացում, 2. Կլիմայի փոփոխության նկատմամբ լանդշաֆտների և էկոհամակարգերի հարմարվողականության բարձրացում, 3. Կլիմայական խելացի գյուղատնտեսական տեխնոլոգիաների ներդրում, 4. Զերոնոցային զագերի արտանետումների նվազեցում, 5 Արդյունքների պահպանության և շարունակականության ապահովում	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կանաչ կլիմայի հիմնադրամին ներկայացված Ծրագրի հայեցակարգի վերաբերյալ հիմնադրամի կողմից ներկայացված առաջարկությունների ներկայացում	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայի Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից ընդունված Ծրագրի հայեցակարգ	0.5	0.5
16	Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի և խառնուրդների ոճեստրի ձևավորում	Նպատակային	Քիմիական նյութերի և խառնուրդների ոճեստրի ստեղծում, քիմիական նյութերի և խառնուրդների անվտանգ գործածության ապահովում	Աշխատանքի կատարման ժամկետը և որակը	Հայաստանի Հանրապետությունում քիմիական նյութերի ոճեստրի ազգային (ներպետական) մասի ձևավորման նախապատրաստական աշխատանքներ	0.5	0.5
17	Ընդերքօգտագործման թափոնների լքված, տիրազուրկ տեղամասերի և օբյեկտների ռեկուլտիվացիայի համար նախագծային փաթեթների մշակում	Նպատակային	Ռեկուլտիվացիոն ծրագրերի մշակում և իրականացում, շրջակա միջավայրի և հարակից համայնքների վրա բացասական ազդեցությունների նվազեցում՝ արտադրական լցակույտերի տեղամասերի և փակված բալոնային տարածքների հստակեցում, ռեկուլտիվացիոն աշխատանքներ իրականացնելու նպատակահարմարության վերաբերյալ համաձայնեցում տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ	Ռեկուլտիվացիոն ծրագրերի կազմման համար վերականգնման ենթակա տարածքների վերաբերյալ հստակեցված տվյալների առկայություն՝ համաձայնեցված տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ:	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարծիք, առաջարկություններ, տվյալներ տարածքների վերաբերյալ	0.5	0.5
18	Հայաստանի Հանրապետության տարածքում աղտոտված, դեգրադացված հողերի մոնիթորինգի իրականացում	Նպատակային	Աղտոտվածության ուսումնասիրության թիրախային հարթակների ընտրություն, մշտադիտարկման ցանցի ստեղծում, մշտադիտարկումների իրականացում	«Հ տարածքին համարժեք՝ նպատակային տեղեկատվության ստացում ապահովող մոնիթորինգային ցանցի առկայություն. - Ուսումնասիրության ենթակա օբյեկտի /մոնիթորինգային հարթակի առկայություն - 22	Տեղեկատվական բազա	0.5	0.5
19	«Առևտրի և ծառայությունների մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը Կառավարության իականությանն արժանանալու վերաբերյալ որոշման ընդունում	Նպատակային	Մեկանգամյա օգտագործման պոլիէթիլենային արտադրանքի գործածության աստիճանական կրճատման և սահմանափակման ապահովումը.	Առևտրի օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերում մեկանգամյա օգտագործման պլաստիկ իրերի որոշակի թիրախային խմբի վաճառքի (իրացման) արգելքի սահմանում	որոշում	0.5	0.5

20	<p>Շրջակա միջավայրի բաղադրիչների (մթնոլորտային օդի, ջրային ռեսուրսների՝ ներառյալ քաղցրահամ և ստորերկրյա ջրերի, հողերի, կենսաբազմազանության) և թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի դիտաչանջների արդիականացում</p>	Նպատակային	<p>ա/Շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգի դիտարկումների, դիտակայանների և դիտաչանջների արդի տեխնոլոգիաներով հազեցվածության ապահովում՝ ք/Բնության հատուկ պահպանվող տարածքներում և անտառտնտեսություններում կենսաբազմազանության օբյեկտների, ներառյալ՝ բուսական և կենդանական աշխարհի ինդիկատոր և կարմիրգրքյան տեսակների հաշվառում և վերլուծություն գ/Միասնական տվյալների հավաքման ստանդարտ՝ ՀՀ տարածքում կենսաբազմազանության տվյալների նույնական հավաքագրման և պահպանման համար տվյալների բազայի ստեղծում՝ կենսաբազմազանության տվյալների պահպանման և արդյունավեր կառավարման նպատակով</p>	<ol style="list-style-type: none"> 1. Շրջակա միջավայրի պահպանության վերահսկողության և մշտադիտարկման միասնական համակարգի կատարելագործումը, 2. Ժամանակակից համակարգերի ներդրումը, 3. Առաջնային տեղեկատվության համակարգված կառավարումը 4. Մթնոլորտային օդի աղտոտվածության գնահատման բարելավման միջոցով նպաստել աղտոտվածության նվազմանը և Հայաստանի Հանրապետության բնակչության համար ավելի առողջ և կայուն շրջակա միջավայրի ձևավորմանը 5. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման պետական քաղաքականության իրականացման համար հիմքերի՝ անհրաժեշտ տվյալների և գնահատականների ստեղծում համալիր, ժամանակակից չափանիշներին համապատասխան մոնիթորինգի համակարգի ստեղծում 	<p>Մոնիթորինգի արդիականացված համակարգերի միջոցով արդյունքի որակի բարելավում 2 հատ դիտակայանի ձեռքբերում Սևանա լճի էկոհամակարգի. մոնիթորինգի իրականացման 32380 ցուցանիշ տվյալների բազա, տվյալների վիզուալիզացիա և քարտեզագրում</p>	0.5	0.5
21	<p>Հիդրոօդերևութաբանական դիտարկումների, կանխատեսումների, տեղեկատվության մշակման, վերլուծության, արխիվացման և տրամադրման ենթահամակարգերի արդիականացում, տրամադրվող ծառայությունների որակի և հասանելիության մեխանիզմների զարգացում</p>	Նպատակային	<p>ա/Հիդրոօդերևութաբանական ավտոմատ կայանների տեղադրում և տեղեկատվության գրանցման, փոխանցման և վիզուալիզացման համակարգի ստեղծում: բ/Ջերմային ալիքների կանխատեսման համակարգի զարգացում</p>	<ol style="list-style-type: none"> 1. Մշտադիտարկման համակարգի արդիականացումը՝ դիտարկումների նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ հնարավորություն կտա հիդրոլոգիական կայաններում տեղեկատվության գրանցման հաճախականության մեծացման 2. Տեղեկատվության փոխանցման ավտոմատացում 3. Ընթացիկ իրավիճակի գնահատական 4. Սատիլի շոգերի կանխատեսում, ազգայնակայանները և շահագրգիռ մարմիններին վաղ նախազգուշացում 	<p>Հիդրոօդերևութաբանական դիտարկումների, տվյալների փոխանցման, մշակման և արդյունքների ներկայացման ժամանակակից պահանջներին համապատասխան ծրագրեր և համակարգ, ջերմային ալիքներ առաջանող սինօպտիկական պրոցեսների դասակարգում . փոքր լուծաչափով եղանակի կանխատեսման թվային մոդելների ներդրում</p>	0.5	0.5
23	<p>Ջրօգտագործման թույլտվությունների ստացման հայտերի գնահատման, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվությամբ տրված իրավունքի՝ վերաձևակերպման, կասեցման, գործողության, ջրօգտագործման թույլտվության ստացման պահանջից ազատման ձևակերպման և օրենքով սահմանված կարգով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրավունքի տրամադրման գործընթացի ապահովում</p>	Ընթացիկ	<p>Ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարում՝ ջրի ազգային պաշարի ապահովում և պահպանում, ջրային ռեսուրսից ջրափի և ջրահեռացման հետ առնչվող անձանց իրավունքների և պարտականությունների ծրակերպում</p>	<p>Ջրօգտագործման թույլտվությունների ստացման հայտերի գնահատման և ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման գործընթացի օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովում</p>	<p>Ջրօգտագործման թույլտվություններ, գրություններ, առաջարկություններ, եզրակացություններ, զեկուցագրեր</p>	2	2
24	<p>Կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման, արտահանման, ներմուծման թույլտվությունների, լիցենզիաների տրամադրման ու պայմանագրերի կնքման ապահովում</p>	Ընթացիկ	<p>կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների պահպանություն</p>	<p>Կենդանական և բուսական աշխարհի օբյեկտների օգտագործման, արտահանման, ներմուծման թույլտվությունների, լիցենզիաների տրամադրման ու պայմանագրերի կնքման գործընթացի օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովում</p>	<p>թույլտվություններ, լիցենզիաներ, եզրակացություններ, պայմանագրեր, գրություններ, առաջարկություններ, զեկուցագրեր</p>	2	2

25	<p>Վտանգավոր թափոնների գործածության, մթնոլորտ վնասակար նյութերի արտանետման թույլտվությունների, օզոնային շերտը քայքայող նյութերի և դրանք պարունակող սպրանքատեսակների ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման թույլտվությունների լիցենզիաների տրամադրման և թափոնների անձանագրերի համաձայնեցման ապահովում</p>	Ընթացիկ	<p>վտանգավոր թափոնների, մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների սահմանափակում և նորմավորում, օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման նորմավորում</p>	<p>վտանգավոր թափոնների գործածության, մթնոլորտ վնասակար նյութերի սահմանային թույլտվությունների արտանետումների, օզոնային շերտը քայքայող և դրանք պարունակող նյութերի ներմուծման, արտահանման, տարանցիկ փոխադրման թույլտվությունների լիցենզիաների տրամադրման և թափոնների անձանագրերի համաձայնեցման գործընթացի օրենքով սահմանված կարգով իրականացման ապահովում</p>	<p>թույլտվություններ, լիցենզիաներ, եզրակացություններ, պայմանագրեր, գրություններ, առաջարկություններ, զեկուցագրեր</p>	2	2
26	<p>Դատական համակարգի, իրավապահ և ԴԱՀ մարմինների հետ աշխատանքների կազմակերպում և դրանից բխող գործունեության ծավալում</p>	Ընթացիկ	<p>Իրավական ներկայացուցչության ապահովում</p>	<p>Նախարարություն ներկայացված գրությունների, հայցերի, դիմումների, բողոքների, հայցադիմումների, միջնորդագրերի, որոշումների, նախարարության կողմից ելք արվող հայցերի, դիմումների, հայցադիմումների, բողոքների, միջնորդությունների և այլ փաստաթղթերի ուսումնասիրում և դրանց վերաբերյալ մասնագիտական եզրակացության տրամադրում, ՀՀ դատարաններում իրավական ներկայացուցչության ապահովում</p>	<p>ՀՀ օրենսդրությանը համապատասխան կազմված փաստաթղթեր, պետության և նախարարության գույքային և ոչ գույքային իրավունքների արդյունավետ իրականացում</p>	2	2
27	<p>Նախարարության կողմից մշակված և նախարարության կարծիքին ներկայացված փաստաթղթերի իրավական կողմի ապահովում</p>	Ընթացիկ	<p>Փաստաթղթերի իրավական համապատասխանեցում ՀՀ օրենսդրության պահանջներին</p>	<p>Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված փաստաթղթերի, վերաբերյալ իրավական-եզրակացություն և մասնագիտական կարծիքի տրամադրում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան կազմված փաստաթղթեր</p>	<p>Պայմանագրի, հուշագրի, համաձայնագրի նախագծեր, պատասխան գրություններ, եզրակացություններ, տեղեկանքներ, առաջարկություններ, հաշվետվություններ, խորհրդատվություն</p>	2	2
28	<p>Շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում ռազմավարական ծրագրերի, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ տնտեսագիտական, ֆինանսական և ծրագրային նախադրյալների մշակման աշխատանքների կազմակերպում</p>	Ընթացիկ	<p>Տնտեսագիտական, ֆինանսական և ծրագրային նախադրյալների ապահովում, ռազմավարական ծրագրերի, բնապահպանության և բնօգտագործման տնտեսական մեխանիզմների մշակում</p>	<p>ՀՀ իրավական ակտերին համապատասխան սահմանված ձևաչափերով ու ժամկետներում հաշվետվությունների, մշակված առաջարկների, ծրագրերի և նախագծերի, կազմված նախահաշիվներ, հավաքագրված և ամփոփված հայտեր</p>	<p>Հաշվետվություններ, ծրագրեր և նախագծեր, նախահաշիվներ, ֆինանսավորման պլաններ, պայմանագրերի նախագծեր, եզրակացություններ</p>	7	7
29	<p>Նախարարության և համակարգի կարիքների համար գնումների գործընթացի կազմակերպում և տարեկան բյուջեների պլանավորման և պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման կազմակերպման աշխատանքների համակարգում</p>	Ընթացիկ	<p>Նախարարության և համակարգի կարիքների համար գնումների գործընթացի կատարման ապահովում</p>	<p>ՀՀ գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան գնումների գործընթացի կազմակերպում</p>	<p>Գնման պայմանագրեր, հավակարգման գործողություններ, վերահսկողության միջոցառումներ</p>	2.5	2.5

30	Ջրային ռեսուրսների պահպանության և ողջամիտ օգտագործմանը միտված նոր հայեցակարգային սկզբունքների, ռազմավարական մոտեցումների, կանոնակարգերի մշակում	Ընթացիկ	Ջրային ռեսուրսների պահպանության ոլորտի քաղաքականության մշակում	Ոլորտի իրավական վերլուծված դաշտ, վերհանված բացեր և սահմանված կարգով դրանց վերացմանն ուղղված վերադասին ներկայացված առաջարկներ	Գրություն, զեկուցագիր, հաշվետվություն, զեկույց	5	5
31	Կենսաբազմազանություն, կենսաանվտանգության և բնության հատուկ պահպանվող տարածքների, պահպանությանը և ողջամիտ օգտագործմանը, էկոտուրիզմի զարգացմանը միտված նոր հայեցակարգային սկզբունքների, ռազմավարական մոտեցումների, կանոնակարգերի մշակում, ոլորտը կարգավորող նորմատիվ կառավարման ակտերի նախագծերի մշակում	Ընթացիկ	Կենսաբազմազանության, կենսաանվտանգության և բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ոլորտի, էկոտուրիզմի զարգացման քաղաքականության մշակում Ոլորտի օրենսդրության կատարելագործում	Ոլորտի իրավական վերլուծված դաշտ, վերհանված բացեր և սահմանված կարգով դրանց վերացմանն ուղղված վերադասին ներկայացված առաջարկներ Մշակված իրավական ակտերի նախագծերի թիվը	Գրություն, զեկուցագիր, հաշվետվություն, զեկույց, ռավական ակտերի նախագծեր	2.5	2.5
32	Բնական էկոհամակարգերի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների, կենսաբազմազանության ու կենսառեսուրսների պահպանության, վերարտադրության և կայուն օգտագործման համակարգում, ինչպես նաև էկոտուրիզմի աջակցության և զարգացման իրականացում	Ընթացիկ	Բնական էկոհամակարգերի, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքների, կենսաբազմազանության ու կենսառեսուրսների պահպանության, վերարտադրության և կայուն օգտագործման ապահովում, էկոտուրիզմի զարգացմանը նպաստող աշխատանքների ապահովում	1.Պատշաճ պահպանված բնական էկոհամակարգեր, այդ թվում՝ բնության հատուկ պահպանվող տարածքներ 2.բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների նախագծերի մշակման և ԲՀՊՏ-ների սահմանների ճշգրտման աշխատանքներ	Կարծիքներ, եզրակացություններ, առաջարկություններ հաստատված կառավարման պլան	2.5	2.5
33	Անտառների կայուն կառավարմանը միտված տվյալների հավաքագրում, վերլուծություն և գնահատում, հաշվետվությունների ուսումնասիրություն	Ընթացիկ	Անտառների կայուն կառավարման՝ անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման քաղաքականության մշակում	Ոլորտի իրավական դաշտի շարունակական վերլուծություն, վերհանված բացեր և սահմանված կարգով դրանց վերացմանն ուղղված վերադասին ներկայացված առաջարկներ	Գրություն, զեկուցագիր, հաշվետվություն, զեկույց, իրավական ակտերի նախագծերի	5	5
34	Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների (անշարժ և շարժական աղբյուրների) պետական հաշվարման աշխատանքների իրականացում և համակարգում	ընթացիկ	Մթնոլորտային օդի որակի կառավարման համար անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծում, արտանետումների պետական հաշվարման իրականացում, հաշվարման ենթակա օբյեկտներ ունեցող կազմակերպությունների ցանկի հստակեցում	Վնասակար նյութերի արտանետումների արժեքների առկայություն: Լրամշակված ժամանակային շարք: Արտանետումների հաշվարման և կազմակերպությունների ցանկի լիարժեքություն:	Հաստակեցված հաստատված ցանկ, ամփոփագիր	5	5
35	Կլիմայի փոփոխության հարմարվողականության լավագույն գործելակերպի ներդրման միջոցով մարզերում և տնտեսության տարբեր ոլորտներում կլիմայի փոփոխության նվազմանը երկրի դիմակայունության մակարդակի բարձրացման և ցածր ածխածնային զարգացման ուղղությամբ միջոցառումների մշակում և համակարգում, Փարիզյան համաձայնագրի ներքո ընդլայնված թափնցիկության շրջանակի կառուցման համար նախադրյալների ստեղծում	Ընթացիկ	Ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման, կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումների մշակում	Առկա իրավիճակի վերլուծություն, վերհանված բացեր, մշակված առաջարկություններ	Իրավական ակտերի նախագծեր, գրություններ, տեղեկանքներ	5	5
36	Ընդերքի, հողերի պահպանությանը վերաբերվող տեղեկատվության հավաքագրում, ամփոփում, վերլուծություն, համապատասխան համակարգչային բազայի ստեղծում, ընդերքօգտագործման ծրագրերի/նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացման մասնակցություն	Ընթացիկ	Ընդերքի, հողերի պահպանության քաղաքականության ձևավորում	Ամփոփված տվյալներ և ստեղծված տեղեկատվական բանկ	Նախագծեր, տվյալների բազաներ, գրություններ, տեղեկանքներ	5	5

37	<p>Վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների էկոլոգիապես անվտանգ կառավարման ոլորտում քաղաքականության և ռազմավարությունների մշակմանը մասնակցություն, ըստ վտանգավորության աստիճանի դասակարգված թափոնների ցանկի մշակում, թափոնների շահավետ օգտահանման, օգտագործման աստիճանակարգության քաղաքականության մշակում և իրականացում, թափոնների պետական հաշվառման իրականացում, վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների կառավարման ոլորտում միջազգային կոնվենցիաներով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում:</p>	Ընթացիկ	Վտանգավոր քիմիական նյութերի և թափոնների կառավարման ոլորտի քաղաքականության իրականացում	Հաշվառված թափոններ, ստեղծված պետական կադաստր	Հաշվետվություն, տեղեկատվական բազա, կարծիքներ	5	5
38	<p>Ջրային, կենդանական ու բուսական աշխարհի օբյեկտների, վտանգավոր թափոնների պետական կադաստրների, ռեեստրների վարման և մոնիթորինգի գործընթացի ապահովում</p>	Ընթացիկ	տվյալների գրանցում, ամփոփում, վերլուծում և տեղեկատվության ապահովում	Ջրային, կենդանական ու բուսական աշխարհի օբյեկտների, վտանգավոր թափոնների կադաստրների վարում	տեղեկատվական բազա, տվյալներ, գրություններ, առաջարկություններ, զեկուցագրեր	2	2
39	<p>Ջրավազանային կառավարման տարածքային մարմիններին (բաժիններին) օրենքով վերապահված լիազորությունների իրականացման աշխատանքների, ինչպես նաև Վարչության գործառույթների շրջանակներում մոնիթորինգի, ոսումնասիրությունների իրականացման գործընթացի ապահովում</p>	Ընթացիկ	Ջրավազանային տարածքային կառավարման բաժինների աշխատանքների արդյունավետ իրականացում	Ջրավազանային տարածքային կառավարման բաժինների կողմից մոնիթորինգի, ոսումնասիրությունների իրականացմանը աջակցություն և զննությունների, ոսումնասիրությունների արդյունքում կազմված փաստաթղթերի, հաշվետվությունների լիարժեքություն	գրություններ, ամփոփագրեր, զեկուցագրեր, հաշվետվություններ, եզրակացություններ	1	1
40	<p>Ջրավազանային կառավարման պլանների մշակման և դրանց իրականացման գործընթացի ապահովում</p>	Ընթացիկ	Ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում	Ջրային ռեսուրսների ուսումնասիրության և կառավարման ակտիվներից ելնելով՝ ջրօգտագործողների ներառյալ համայնքների, գյուղատնտեսության, էներգետիկայի և արդյունաբերության փոխկապակցված փոխհարաբերությունների հավասարակշռում: Ջրային ռեսուրսների առաջարկի և պահանջարկի հավասարակշռում, ջրավազանում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի բացահայտում և ռիսկերի կառավարում: Ինտեգրացիոն մոնիթորինգի և կառավարման պլանների մշակում:	գրություններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, եզրակացություններ, ջրավազանային կառավարման պլաններ	1	1
41	<p>Օրենսդրության վերլուծություն, իրավական ակտերի մշակում և կատարելագործում, փորձագիտական եզրակացության տրամադրում</p>	Ընթացիկ	ՀՀ օրենսդրական հակասությունների բացառում	Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված և ՀԳՄ-ներից համաձայնեցման ներկայացված իրավական ակտերի, ստանդարտների նախագծերի վերաբերյալ տրամադրված մասնագիտական իրավական փորձագիտական եզրակացություն, ստորաբաժանումների մասնագիտական կարծիքներ, կազմակերպված քննարկումներ, փաթեթի լիակազմության ու ՀՀ օրենսդրության համապատասխանության վերաբերյալ տրամադրված կարծիք	Իրավական ակտերի նախագիծ, փորձագիտական եզրակացություն, առաջարկություն և առարկություն	5	5

42	Բնապահպանության ոլորտում միջազգային համագործակցության իրականացում	Ընթացիկ	Միջազգային, բնապահպանական գործընթացներին մասնակցության ապահովում, բնապահպանական բնույթի միջազգային պայմանագրերով ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման ապահովում, ՀՀ արտաքին քաղաքականությանը համահունչ բնապահպանական միջոցառումների իրականացում	Կազմակերպված միջոցառումներ, հանդիպումներ օտարերկրյա և միջազգային պատվիրակությունների հետ, հաստատված գործնական կապեր, բնապահպանական միջազգային ծրագրերի և միջոցառումների միջոցով բնապահպանական ոլորտում ՀՀ ստանձնած պարտավորություններին համապատասխան աշխատանքների կատարում	Մշակված համաձայնագրերի նախագծեր, համագործակցության առաջարկություններ, տեղեկատվական փաթեթներ, գրություններ, կարծիքներ	5	5
43	Նախարարության տեղեկատվական ապահովում	Ընթացիկ	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության և հանրության հետ կապի ապահովում	Նախարարության գործունեությունը լուսաբանող հրապարակումներ, դիմում-բողոքների պատասխաններ	Պաշտոնական հաղորդագրություններ, հարցազրույցներ, մեկնաբանություններ, հեռուստա և ռադիո ելույթներ	5.00	5.00
44	Նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կազմակերպում և իրականացում, արձանագրությունների ու նախարարության արխիվի վարում, հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	Ընթացիկ	Գործակարության իրականացում	1. Սահմանված կարգով էլեկտրոնային համակարգում գրանցված գրություններ. 2. Սահմանված ժամկետում ձևակերպված փաստաթղթերի ելքեր. 3. Բացառված չգրանցված, չէքսզերված փաստաթղթեր, 4. Խորհրդակցությունների ընթացքում տրված հանձնարարականների գրանցում, 5. ուշացումով կատարված հանձնարարականների բացառում	Մտից և ելից փաստաթղթեր, արձանագրություններ, վերահսկողության ամփոփաթեթեր	5.00	5.00
45	Անձնակազմի կառավարման աշխատանքների իրականացում	ընթացիկ	Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար իրավունքների ու պարտականությունների, մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների մասին պահանջների սահմանում, մրցութային հանձնաժողովների աշխատանքների թնականոն ընթացքի ապահովում, վերապատրաստման գործընթացի իրականացման ապահովում, անձնական գործերի վարում	1. Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան պաշտոնի անձնագիր . 2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով առկա քաղաքացիության թափուր պաշտոնի համալրման և վերապատրաստման հետ կապված իրականացված աշխատանքներ: 3. Նախարարությունում գործող համապատասխան համակարգչային ծրագրերում առկա հարցաշարեր: 4. Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան կազմված անձնական գործեր,	Նախարարի հրաման, պաշտոնի անձնագիր, գլխավոր քարտուղարի հրաման, մրցութային հանձնաժողովների արձանագրություններ և որոշումներ, անձնական գործ, վերապատրաստման հայտ, գրություն	5.00	5.00
46	Հաշվապահական հաշվառման գործառույթների վարում, ամփոփում և համակարգում, ինչպես նաև տնտեսական ու տեխնիկական սպասարկման գործառույթների համակարգում	Ընթացիկ	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովելու հաշվապահական հաշվառումը, փաստաթղթափոխումը, ձևակերպումները՝ կիրառելով արդյունավետ ներքին հսկողության համակարգ, ինչպես նաև նախարարության նյութատեխնիկական սպասարկման ապահովումը:	Հաշվային պլանով ձևակերպումների ապահովում, համակարգչային մուտքագրում, համապատասխան փաստաթղթափոխում	Հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, գրանցամատյաններ, տեղեկագրեր և օրդերներ	1	0.5
47	Աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման գործընթացների իրականացման ապահովում	Ընթացիկ	Աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականների գնահատման աշխատանքների համակարգում և դրանց ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ օժանդակության ցուցաբերում	1. ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ սահմանված կատարված պահանջներ: 2. Նախարարության էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում յուրաքանչյուր աշխատողի հասցեից մուտքագրված և իր անմիջական ղեկավարի կողմից հաստատված աշխատանքային ծրագրեր:	Աշխատանքային ծրագրեր և գնահատված կատարողականներ	1.00	1.00
48	Այլ ընթացիկ աշխատանքներ	Ընթացիկ	x	x	x	2.00	2.00

49	Չպլանավորված աշխատանքներ	Ընթացիկ/ նպատակային	x	x	x	2.00	2.50
NN	Փոփոխություններ աշխատանքներում						
	Ընդամենը					100.00	100.00

ՆԱԽԱՐԱՐ

ԳԼԽՈՎՈՐ ԶԱՐԲՏՈՒՄ

ՀԱՄԱԻՅԱԼ

ԱՎՁԱՆՆԵՑԱԼ

Հ/Հ	Ժամկետը		I կիսամյակի գնահատական		II կիսամյակի գնահատական		Ներգրավված ուսուցիչներ (ինքնուրույն ստորաբաժանումներ*)																											
	պլան	իրական	գնահ.	կշռվ. գնահ.	գնահ.	կշռվ. գնահ.	Ընդամենը մ/օր		Գլխավոր քարտուղար	Ջրային ուսուցիչների կառավարման վարչություն	Կենսաոճուրների կառավարման վարչություն	Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման վարչություն	Ռազմավարական քաղաքականության վարչություն	Միջազգային համագործակցության վարչություն	Իրավաբանական վարչություն		Կլիմայական քաղաքականության վարչություն	Մթնոլորտային քաղաքականության վարչություն	Ջրային քաղաքականության վարչություն	Անտառային քաղաքականության վարչություն		Բնության պահպանվող տարածքների և կենսաբազմազանության քաղաքականության վարչություն	Հողերի և ընդերքի քաղաքականության վարչություն											
							պլան	իրական							պլան	իրական				պլան	իրական		պլան	իրական	պլան	իրական	պլան	իրական	պլան	իրական	պլան	իրական	պլան	իրական
9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	
1	27.12.2024					28		2		25																								
2	27.12.2024					29		2		25																								
3	27.12.2024					25		2																					20					

42										
43						1130				
44			2026							
45									950	
46					3580					
47									50	
48	30		70		100		30	488	50	